


**ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՂԱՆՉՅԱՆ**  
(Պատմական գիտությունների թեկնածու)

**ՊԱՏՄԱԲԱՆ ԳԵՂՐԳԵ ԲԵԶՎԻԿՈՆԻՆ ԵՎ ՆՐԱ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



Երկու տարի առաջ, 1966 թ. ապրիլի 30-ին, ձանը հիվանդությունից հետո, իր ստեղծագործական կյանքի ծաղկման շրջանում, մեզանից ընդմիշտ հեռացավ Ռումինիայի ամենաեռանդուն և վաստակաշտ պատմաբաններից մեկը՝ Գեղրդե Բեզվիկոնին:

Գոյց շատ քերը մեր ժողովրդից իմացան, որ անժամանակ շիզոպ այդ գիտնականի հետ միասին Բուխարեստի հոդին համձնելու հակառական վաղեմի մեկ բարեկամը, որ սկսած իր երիտասարդական հա-

սակից անահման սիրով ու ոգևորությամբ իրեն նվիրել էր հաև մեր ժողովրդի անցյալը ուսումնասիրելու ազնվագուն գործին:

Գեղրդե Բեզվիկոնին ծնվել էր 1910 թ. ապրիլի 14-ին Ժիտումիրում, Բայլոնի մոտավորականի ընտանիքում: Իր ստացած ուսումնից բացի, ան երկու տարի շարունակ հետեւվել էր որոշնացի աշխարհականուչակ պատմաբան և հայագետ Նիկոլա Յորգայի դասերին, ինչպես նաև լսել փելանիառոյթան դրվոր Մ. Ի. Կատարչիի կարդացած փիլիսոփայության պատմություն դասընթացները: Սակայն դեռասի Գեն բգեի համար ամենամեծ դպրոցը հանդիսացավ երկրի մեջ ծայրից մյուսը կատարած իր ուսումնասիրական ուղղությունները և անհամար դիվանատերնի համբերատար զննումը և ուսումնասիրումը: Նրա ամբողջական որոշումը միաւոր հսկա առաղձնելու կարուլացավ: Ամբարել շատ ու շատ պատմագիտական հարցերի վերաբերյալ, հարցեր, որոնց մասին իրենից առաջ գրեթե ոչ ոք չէր գրավել ուսմինական պատմագիտության մեջ: Բեզվիկոնին սկսեց գրել և հանդես գալ պարբերականներում, երբ դեռևս գիմնազիան չէր ավարտել: Դեռ 14 տարեկան էր նա, երբ գրեց ֆրանսերեն իր առաջին հոդվածը, որը ուղարկվեց Փարիզ: Եվ այսպես նրա բովանդակալից կյանքը սկսվեց մինչև իր վերջին օրերը բացառիկ մի նվիրություն էր դեպի իր ժողովրդի պատմության հետազոտման գործը: Այդ մի պահանջելի առաքելություն էր նվիրված Ռումինիայի և Մոլդովական ՍՍՀ-ի պատմության մշուշապատ մասերը լուսաբանելու, ճշգրտելու և բազմաթիվ գանձեր մթությունից լուսին քերելու ուղղությամբ:

Բեզվիկոնին հագիւ 23 տարեկան դեռատի երիտասարդ էր, երբ հայրականուով բազմաթիվ նյութական դժվարությունների, անսահման եռանդով, մկան 1933 թ. իրեն

Հվիրեց «Din trecutul nostru» (Մեր անցյալից) պատմագիտական հանդեսի խմբագրումն և հրատարակման դժվարին գործին, և որը շարունակեց մինչև 1939 թ.: Ուսումնասիրողը ինչքան էլ հարևաններին թերթելու իննի հիշյալ ամսագրի շուրջ 2000 էջեր բրվանդակող հավաքածուն, որը զարդարված է նաև 700 լուսանկարներով, դժվար չի լինի համոզվելու համար, թե ինչքան մեծ աշխատանք ու եռանդ է ի գործ դրել Բեզվիկոնին, այն խմբագրելու և հատկապես շատ հաճախ նրա համարների մեծ մասը ուշագրավ ուսումնագրություններով ամբողջացնելու համար: Բեզվիկոնինի ինչպես հիշյալ հանդեսում, այնպես էլ բազմաթիվ այլ պարբերականներում հրատարակած մեծ թվով հոդվածները, ինչպես նաև մենագրությունները հիմնականում շոշափում են երկու հարց: Մոլորվական ՍՍՀ-ի պատմությունն ու մոլորվա-ուսուական և ուսումնա-ուսուական դարավոր հրատարակությունները: Ահա այս նախամիտությունները էլ գլխավորաբար մնացին Բեզվիկոնինի կյանքի տարերքը և մեծ ճանաչում և հեղինակություն բերեցին նրան: Այդ էր պատճառը, որ ամեն անօամ, երբ հարց էր առաջանում բարձրացնելու ուսումն, մոլորվակ և ուսումնությունների դարավոր հրատարակությունների պատմությունը, ինչպես Ռուսիական Սոցիալիստական Հանրապետությունում, այնպես էլ Մոլորվական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունում համարվում է իմացության և անսպասության գիտելիքը:

Հակառակ իր անժամանակ մահվան, Գեղրգե Բեզվիկոնինի թողել է շատ հարուստ գիտական ժառանգություն: Բավական է միայն այստեղ հետեւ, որ միայն նրա տպագրի մենագրությունների էջերի գործարը մինչև օրս կազմում է շուրջ 7000 էջ, սրանց մեջ դեռ շեն մտնում նոյնքան ծավալ ունեցող նրա անտիկ գործերը և հարյուրների հասնող նրա տպագրի հոդվածները:

Բեզվիկոնինի գիտական աշխատությունների կարուր մեկ մասը նվիրված է Մոլորվական ՍՍՀ-ի պատմությանը: Նման գործերից հիշատակները միան մի քանիսը. «Երեւմնի Բեսարաբիան (Պրշկանի գերեզմանոց Քիշինում)» (1929 թ.), «Բեսարաբիացի կինը» (1934 թ.), «Բեսարաբիացիների դիմանկարներ» (1936 թ.), «Ժարկայի վանքը» (Բուխարեստ, 1942 թ., 280 էջ), «Երեկով և այսօրվա դիմաստվերներ» (Բուխարեստ, 1943 թ., 336 էջ) և այլն:

Ռումինիայի պատմագիտության մեջ հատկապես շատ մեծ է Բեզվիկոնինի ծառայությունը ուսումնական և ուսուական դարավոր հրատարակությունների պատմությունը:

Սումնասիրելու գործում: Նա փաստորեն այս ասպարեզում մնաց անմրցելի և երկար տարիների բեղմնավոր աշխատանքի շնորհիվ ոչ միայն ի հայտ դարձրեց բազմաթիվ հարուստ հոդվածներ, այլև ծավալուն ուսումնասիրությունների ստեղծման միջոցով նա կարողացավ մեզ ուրվագծել այդ հարաբերությունների նոր պատմությունը իր բոլոր դըրվագմներով հանդերձ:

Բեզվիկոնին առաջիններից մեկն էր, որ խորապես ուսումնասիրեց ուսումնա բանական կապերը Մոլորվական երկրի հետ: Այս կարգի գործերից են. «Պուշկինի Բերությունը Բեսարաբիայում» (1937 թ.), «Պուշկինը աքսորում» (1947 թ., էջ 184), «Պուշկինի Քիշինուի ընկերները երգիծական բանաստեղծության մեջ» (Հայոց թորոտում Քիշինուում և Օղեայում կայացած Պուշկինագետների համաժողովում 1958 թ.), «Պուշկինը և Մոլորվայի գրղղները» (1960 թ.) և այլն:

Դարձյալ Բեզվիկոնինի էր, որ մեծ խմանքով ձեռնախուն եղավ հետազոտելու միջնադարում ուսումնական երկրներից անցնող ուսումնությունների թողած հարուստ տեղեկությունները, այսպիսով թարմ նյութեր հայրապետությունը պուսինական պատմագիտությանը: Այդ շարքի գործերից ամենից առաջ անհրաժեշտ է հիշատակել «Ռուս ճանապարհորդները Մոլորվայում և Վալարբիայում» (Բուխարեստ, 1947 թ., 464 էջ) ծավալուն հատորը, «Մատենագիտական նշումներ ուսումնապարհորդների կողմից 15—18-րդ դարումներում երկրներում կատարված ուղևորությունների վերաբերյալ» (Բուխարեստ, 1957 թ.), և այլն:

Ռուս նշանավոր հեղափոխական գործիչ Պետանիչի Ռումինիա գտնվելու հարցին են Ավիրված նրա «Պետանիվը Ռումինիայում» (1949 թ.), «Պետանիվի անցումը դոկտ. Պ. Ալեքսանդրովի հիմնադրած գաղութից» (1949) գործերը: Բեզվիկոնինի իր հայտնաբերած նյութերի հիման վրա անդրադարձել է նաև ուսումնությունների հաղացած դերին Ռումինիայի առողջապահության պատմության մեջ: Այս շարքի են. «Ռումին-ուսուական բժշկական կապերի պատմություններ» (1957 թ.), «Անտիկ տեղեկություններ 1848—1849 թթ. Վալարբիայում գործող ուսուական հիմանդրությունների վերաբերյալ» (1959 թ.) և այլն:

Բեզվիկոնին վերոհիշյալ հարաբերությունների մանրամասն հանրագումարը տվեց ընդհանրապես ուսումնական հարաբերությունների պատմությանը նվիրած իր մեծարժեք մենագրությունների մեջ: Հիշյալ գործերը ևս, ինչպես հեղինակի մուս աշխատություններից շատ-շատերը, ունեցել են ի-

ունց շարտնակալան զարգացումը և արժանացել մի քանի հրատարակությունների: Ալդ հարաբերությունների պատմությանը Բեզվիկոնին հայս նվիրել է իր «Մումին-ուսական հարաբերություններ» (Բոլսարեստ, 1945, էջ 120) գործը, ավելի ուշ նորանոր հարուստ հոյթերի հիման վրա նաև կրկին է անդրադարձել նույն հարցին, գրելով ««Նյութեր ուսմին-ուսական հարաբերությունների պատմության վերաբերյալ» (1958 թ., 313 էջ) հասորը և վերջապես դարձալ ավելի ճնշացված ձևով՝ «Ռումինահրություն ուսմին-ուսական կապերի պատմության» (1962 թ., 347 էջ) աշխատությունը: Նշենք նաև այն մասին, որ Բեղինակի անտիպ թողած գործերում գտնվում է նույն հարաբերությունների պատմությանը նվիրված ճնշացված ու նկարագրող և տպագրության պատրաստ մի այլ հասոր ևս: Բեզվիկոնին հայտնի մասնագետն էր նաև հին գերդաստանների ճյուղագրությունների պատմության: Բացի նման բնույթի տպագիր բազմաթիվ գործերից իր ձեռագիր ժառանգության մեջ են գտնվում նաև «Մորովի» (350 էջ), «Նշումներ ուսական ճյուղագրության և կնիքագիտության վերաբերյալ» (50 էջ), «Մոլովայի ճյուղագրություններ», «Յարա Ռումինակայի ճյուղագրություններ», «Բենարարիայի ճյուղագրությունը» և այլն: Բեզվիկոնին նաև բազմավաստակ մատենագետն էր: Հատկապես նրա անտիպ գործերի գույն-գործոցն է հանդիսանում «Մումին-ուսական և ուսմին-սովորական հարաբերությունների մատենագիտությունը» (700 էջ), ձեռագիրը գտնվում է տպագրության համար պատրաստ վիճակում ուսմինական ակադեմիայի պատմության հնատիտուսում), «Մումինական ակադեմիայի ուսերեն վավերաբերյալ» (650 էջ), «Մոլովական ՍՍՀ-ի մատենագիտությունը», (ուսերեն գրված հազարավոր քարտեր): «Մումինական ակադեմիայի ուսերեն ձեռագրերը» (տպագրված՝ 1949 թ. 64 էջ) և այլն: Դարձալ Բեզվիկոնին գոչին է պատկանում Սովետական Միությանը նվիրված հատորը, հրատարակված 1945 թ. (124 էջ), որը 1947 թ. վերամշակված և ճնշացված ձևով՝ արժանացավ Երևանորդ հրատարակության (151 էջ): Նրա ուշադրությունից չի պրիվել նաև Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստի պատմության ուսումնասիրումը: Նա Բեղինակ է Բուխարեստի կենսագրական հշումներին նվիրված 300 էջանոց մի աշխատության (1963 թ.), որը բազմացվել է ուսմինական ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից, և այլ բազմապահի աշխատություններ, որոնց նորագրերի թվումն իսկ բազմաթիվ էշեր կարող է գրավել:

Գեղրգե Բեզվիկոնին այն գիտնականներից էր, որ դեռ շատ երիտասարդ հասակից աշքի էր ընկեր և գնահատուել ինչպես իր հայրենիքում, այնպես էլ արտասահմանում: Դեռ 25 տարեկան երիտասարդ էր Բեզվիկոնին, երբ սկսեց ընտրվել մի շարք գիտական ընկերությունների թղթակից անդամ և արժանացավ շքանշանների: Նա թղթակից անդամ էր ընտրվել Փարիզի, Բրյուսելի, Սոֆիայի և այլ վարերի պատմագիտական ընկերությունների, ինչպես նաև մրցանակի արժանացել ուսմինական ակադեմիայի կողմից: Անսահման եռանդի տեր գիտնականն ու ազնվագոյն այս մարդը, որ մինեույն ժամանակ համեստության մի տիպար էր, դեռ վաղող արժանացել էր նաև արտասահման և հայրենի շքանշանների: Ֆրանսիայի պատմագիտական և կիբրագիտական ինստիտուտը նրան շնորհեց ուկե մեծ մեղաք: Նովսպես նա արժանացավ Ֆրանսիական Հանրապետության Վեգենի լիալ կարգի շքանշանին, դարձալ Ֆրանսիական «Arts-Science-Lettres» ակադեմիական ընկերության Վերմա մեղաքին, և այլն: Ռումինիայի մեծանուն վիպասան և խաղաղության պաշտպանության միջազգային մրցանակի դափնինեկիր Միհայլի Սադովեանուն «Հանու Առսեւե» ընկերության կողմից: Բեզվիկոնինի շնորհեց 1936 թ. պատմագիտական աշխատությունների համար սահմանված մրցանակը: Դարձալ Բեզվիկոնինի էր, որ 1948 թ. արժանացավ նաև Ռումինական ակադեմիայի Նրատորելի անվան մրցանակին: Գեղրգե Բեզվիկոնին գիտական գործունեությունը մեծ դրվագակիր է արժանացել ինչպես ուսմինական, այնպես էլ արտասահման գիտական մամուլում: Տարբեր ազգությունների պատկանող բազմաթիվ երեսի անձնավորություններ առանձին գրախոսություններով բարձր են գնահատել նրա աշխատությունները: Ռումինացի աշխարհահնչակ գիտնական նիկոլա Ցորգան, որ առաջին օրվանից հետևել էր Բեզվիկոնինի քայլերին, դեռ շատ վաղ կուսի էր նրան սպասող փայլուն ապագան: Ցորգան դեռ 1936 թ., երբ Բեզվիկոնին հազիվ 26 տարեկան էր, նրան ողղած իր համակում գրել էր հետևյալը: «Միշտ է նկատել եմ քո այնքան թանկագիր աշխատությունները և արժեքավորել եմ գիտությանը մատուցած քո այնքան օգտավետ ծառայությունները»:

\*  
\* \*

Ինչպես հայտնի է, հայագիտությունը Ռումինիայում բավականին հարուստ ավանդություններ ունի: Ռումինիայի առաջավոր

մուավորականության մեջ նկած դեռ 19-րդ դարի վերջից գտնվել են հայտնի պատմաբաններ և արվեստաբաններ, որոնք իրենց երկրի պատմությունը ուսումնասիրելու ընացքում հանդիպելով նաև այդ երկրում ապրած հայերի դարավոր համակեցությունը փաստող լուսավոր հետքերի, ազնվություն են ունեցել զբաղվելու նաև մեր ժողովորդի պատմությամբ։ Ակամ Ռումանի եպիսկոպոս Մելիխենեկ Շոնֆրենեսկուից (1822—1892), որ շերտ մի հայասեր էր և հրատարակության հանձնեց Մոլորվայի մի քանի հայկական հին եկեղեցների արձանագրությունները, մինչև մեծանուն պատմաբան Իոդրան Պ. Համենու (1839—1907), որն իր բազմաթիվ աշխատությունների մեջ մեծ սիրով անդրադարձավ նաև հայերին, հասնելով հոչակավոր Նիկոլա Յորգային (1871—1940), որ առանձին աշխատություններ նվիրեց Կիլիկյան Հայաստանի, ինչպես նաև ոստինահայ գաղութի պատմությանը։ Հիշենք նաև արվեստաբան Գեորգի Բալշին (1868—1934), որ մեծ գորգուրանքով ուսումնասիրեց նաև հայ արվեստի թողած ազդեցությունները ոստինական ճարտարապետության վրա, և վերջապես այրոֆ.-դոկտ. Վլադ Բընդցեանուին (1900—1963), որ նմուտ էր հայերեն գրաբարին և արտակարգորեն սիրեց հային և մինչև վերջին շունչը Եվրոպայում և Ռումինիայում հայագիտության ոգեշնչողը հանդիսանալուց հետո իր ցանկությամբ մասից հետո իսկ հայերից շրածանվելու համար՝ իր վերջին հանգիստը գտավ Բուխարեստի հայոց գերեզմանոցում։ Եղան նաև որդիշներ ևս, որոնք իրենց համեստ նպաստի բաժինը քերեցին և դեռ շարունակում են քերել երկու ժողովուրդների փոխադարձ հանաշման գործում։ Նրանց անունները միշտ խորին երախտագիտությամբ պիտի հիշվեն հայ ժողովուրդի լիակատար պատմության մեջ։

Ահա ոստինացի հիշյալ հայագետների շարքում իր պատվավոր տեղն ունի նաև բազմավայսուկ գիտնական Գեորգի Բեզվիլինին։ Նա ինչպես Քիշինևում, այնպես էլ Բուխարեստում համայն շրջապատված է եղել հայ բարեկամներով։ «Ինձ համար միշտ էլ համակրելի են եղել աշխատասեր հայերը, —գրում էր մեզ ուշարկած իր համակենրից մեկում, Բեզվիլինին, —մեզանից ոչ հեռու գտնվում էր հայկական գերեզմանոցը, և ես հաճախ է, որ դիտում էի գերեզմանային հետաքրքրական կոթողները։ Հայերի մասին գրած իմ առաջին աշխատության վրա ես աշխատել եմ մի ամբողջ տարի, և այն հանդիսանում է իմ ամենաատացին լուրջ ոստինասիրություններից մեկը»։ Բեզվիլինին Ռումինիայում և Մոլորվական ՍՍՀ-ում կատարած

ովկտորությունների ընթացքում հաճախ է հանդիպել հայկական հուշարձանների, ինչպես Սոլյովյառում և ի մասնավորի ուսումնականության երթևմնի Անին հանդիսացող Սուշապյում (Հաճկատարի վանքը և այլն), և եռանուն և այլն։ Նա քաղաքից քաղաք ուսումնասիրել է հայերի վերաբերյալ բազմաթիվ դիմանատաներ, ինչպես նաև հայկական հուշարձաններ, որոնցից կարևոր մի մասը ոչնչացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում։ Դեռ վաղ երիտասարդությունից հայերի և հայոց անցյալին վերաբերող հյութերի հետ շփումը՝ Բեզվիլինինի դարձին նաև հայերի թողած դարավոր հետքերի ջերմեռանդ հետազոտող և մեր ժողովորդի սիրելի բարեկամ։ Նա կարևոր ավանդ է մուծել հայ-մոլորվական և հայ-ռումինական, ինչպես նաև հայ-ռուսական դրավոր կապերի ուսումնասիրության պատմության մեջ։

Բեզվիլինինի առաջին հայագիտական աշխատությունը կրում է «Հայերը Բեսարաբիայում։ Նախիշևանի և Բեսարաբիայի թեմը։ Մասուկ բեյ» Խորագիրը և լույս է տեսել 1934 թ.։ Աշխատության մեծագույն առավելությունը կայանում է ոչ միայն հրանում, որ նաև հանդիսանում է հայ կարևոր գաղթավայրերից մեջի պատմությունը որպագծելու առաջին համառոտ փորձը, այլև այն, որ նա հիմնականում՝ խարսխվել է հետինակալի կողմից հայտնաբերված դիմանային անտիպ հյութերի վրա։ Ուսումնասիրությունը բաժանված է տասը հատվածների ։ Ակզիրի մասում հետինակալը անդրադարձել է գաղութի պատմությանը իր ծագման օրից մինչև 19-րդ դարի սկիզբը։ Առանձին կանգ է առել Բեսարաբիայի թեմի առաջին հոգևոր առաջնորդ Գրիգոր արքեպ։ Զաքարյանի կյանքին և նրա հիմնադրած Քիշինևի կալվածների վրա։ Խոսվում է նաև թեմի առաջնորդներ Ներսես Աշտարակեցու և Գարբիել Ալյավովսկու և Վերշինիս հաջորդների գործունեության մասին, որից հետո անդրադարձում է նաև թեմի կյանքին մինչև 20-րդ դարի սկիզբը։ Ուշագրավ է հատկապես հայագի հաշանակուր դիմանագետն և հայտնի ուսումնական Մասուկ բեյ Միրզայանի և հայ կալվածատիրության նվիրված բաժինը։ Աշխատությունը փակվում է Բեսարաբիայի հայ կաթոլիկների մասին գրված համառոտ ակնարկով։

Բեզվիլինինի երկրորդ անգամ անդրադարձավ հայերին 1935 թ. իր «Թեմքեր և սպար-

<sup>1</sup> Gheorghe Bezviconi, Armenii în Basarabia Eparhia Nahicevaneană și Basarabeana. M. nuc bei., "Din trecutul nostru", Ianuarie 1934, No.3 — 4, Chiș'nău 62 p.

«Եթ հյուսիսացին Մոլդովացից»<sup>2</sup> ուսումնասիրության մեջ, որ կանգ առավ երկու հայ ականավոր գերդաստանների պատմության վրա: «Դրանցից առաջինը նվիրված էր Ռուսիանեացում ապրող Միջուկ բեյի վերջին շառավիղներին (էջ 28—30), որ խոսեց Մանուկ բեյի եղբոր՝ Միջուկ բեյի հետնորդների մասին, որոնցից ունաք դեռևս ապրում էին իր ժամանակ: Ոչ պակաս ուշագրավ էին Բուլովինեացում գործող հայագօթի նշանակությունը կամ Պրուսկուլյան ասպետական տիտղոսի արժանացած գերդաստանի մասին նվիրված էջերը (30—37), որոնք կարեւոր նպաստ են բերում Ռուսիանահայ գերդաստանների ցարդ գրոված ճողովագրության պատմության համար: Նշվում է, որ սույն գերդաստանի համապետի անունը նախապետ է եղել և Տոնավագ և որը շատ դեռաստի հասակում մոտ գործելով Մոլդովայի իշխանի պալատում մականվանվել է Պրուսկուլ (ռուսիներեն՝ մանուկ): Սույն գերդաստանից էր Գրիգոր Պրուսկուլը, որ Մոլդովայի իշխանական Կոստանդին Շենան Ռամուշից իշխանը (1749—1753 և 1756—1757 թթ.) կողմից նշանակվեց հայերի դատավոր և կառավարիչ: Հոդվածում խոսվում է նաև վերջինիս հետնորդների մասին:

Եթե իր առաջին հայագիտական գործում Բեզզվիկոնին անդրադարձել էր նաև Մանուկ բեյի կյանքին և գործունեությանը, ապա հետագա տարիներին միշտ որոնող գիտնականը նորանոր փաստաթղթերի հայտնաբերման շնորհիվ կարողացավ երկրորդ հրատարակության միջոցով ավելի հիմնավոր ուսումնասիրության հյութ դարձնել այդ նշանավոր հայի դիվանագիտական գործունեությունը: Այդ գործը լույս տեսավ 1938 թ. «Մանուկ բեյ»<sup>3</sup> խորագրու և բաղկացած էր 55 էջերից: Թուն Բեզզվիկոնից առաջ հայ և օտար հեղինակներ հոդվածներ և երեսն մենագրություններ էին նվիրել Մանուկի կյանքին, սակայն նորան հաճախ խառն են եղել առասպեկտով: հետևաբար դրանք թեռու են եղել այդ նշանավոր ամձի գործունեության լրիվ պատկերը ներկայացնելուց: Բեզզվիկոնին միշտ կերպով նկատել էր, որ մինչև իր աշխատությունը դեռևս ոչ ոք չէր գրել նրա քննական կենսագրությունը. «Միջներ,—գրում էր Բեզզվիկոնին իր առաջարանում,—այդ հոյակապ հայի ստվերը արժանի էր ավելի մեծ ուշադրության, հատ-

կապես բոլոր այն երկրներում, որ նա գործել էր. իբրև բոլղարական քաղաքների կազմակերպիչ, Բարձրագույն Ռուս դրագուման (թարգման) և բեյ, իբրև Կըմբրիաց, Պահանիկ և իշխան Մոլդովակարիայում, սերբերի և Բուխարեստի ազատարար, Բուխարեստի խաղաղության դաշնաքի Կնքման կազմակերպիչ, հայերի իշխան՝ Վիեննայի վեհածողություն, Նորին վահանություն և ասպետ՝ Ռուսաստանում, հարգված Ալեքսանդր Ա. կայսրի կողմից, և վերջապես հայագծերի հախանձենող, որոնց իրագործվելու դեպքում մոռացումից դրու էր բերվելու Բանարիան: Եվ իսկապես Բեզզվիկոնին հաջողությունը շատ մեծ եղավ, քանի որ նա ոչ միայն լրիվ շափով տեղյալ էր իշխանից առաջ Մանուկ բեյի մասին գրված աշխատություններին, այլև իր այս նոր ուսումնասիրությունը կառուցել էր դիվանագիտների հետևյալ երեք հիմնական արյուրների, ինչպես նաև այլ անտիպ նյութերի հիմնան վրա. ա) Հնչեցուում դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ պահպող Մանուկ բեյի գերդաստանի դիվանը, բ) Քիշինևի պետական դիվանի նյութերը, գ) Մոլդովական Կըմպուլունգ քաղաքի Մանուկ բեյի եղբոր վերջին շառավիղներից հայագօթի Տիգրան Պրուսկուլի դիվանը և այլ նյութեր: Սույն աշխատությունը բաղկացած էր հինգ մասից. ա) ներածություն, բ) Թուրքիայում, գ) Դանուբյան պատերազմը (1806—1812 թթ.), դ) վերջին տարիները, ե) Մանուկ բեյի հաջորդները: Այս աշխատությունը կարևոր նվաճում էր, քանի որ նրա շնորհիվ է, որ Մանուկ բեյի կենսագրությունը դրվեց գիտական հիմքերի վրա և մեկո՞ւ վանելով նրա անվան շրոջ ստեղծված առասպեկտների շղարշը, առաջին անգամ լինելով ցուց տրրվեց, որ նա լոկ մի խանի (քարավանաստուն) տեր հարուստ մեկը չէր եղել, այլ հանդիսացել էր 19-րդ դարի սկզբի հայագօթի նշանավոր մի դիվանագետն, և որի անունը ի պատվի էր մեծ պետությունների բազմաթիվ նշանակող անձնավորությունների մոտ, և որը նշանակալից ծառայություններ էր մատուցել ինչպես Բաղկանան թերակղզու ծողովորդներին, այնպես էլ Ռուսաստանին: Հետագայում նորահայտ նյութերի հիմնա վրա, Բեզզվիկոնին պատրաստեց նաև Մանուկ բեյին նվիրված մի նոր գործ ևս:

Բեզզվիկոնին հետագա տարիներին և շարունակելով հայ գաղութի պատմության ուսումնասիրման գործը, 1944 թ. հրատարակեց «Բնարարիայի հայերը մինչև 19-րդ դարը» վերնագրով նոդվածը<sup>4</sup>:

<sup>2</sup> Gheorghe Bezviconi, Figuri și umbre din nordul Moldovei, „Din trecutul nostru”, Ianuarie-Septembrie 1935, No. 21—24, p. 23—37.

<sup>3</sup> Gheorghe Bezviconi, Manuc bei, editia II, „Din trecutul nostru”, 1938, Martie-Aprilie, No. 51—55, 55 p.

<sup>4</sup> Gheorghe Bezviconi, Armenii din Basarabia până în secolul al XIX, „Viața Basarabiei”, 1944 No. 1—2, p. 37—39.

1940 թ. ուսմինահայ հայտնի հրապարակի Վարդան Սեղուումյանի խմբագրած և հրատարակած «*Ararat*» հայագիտական ուսմինելեռն համեմատ լույս տեսավ նրա հայագիտական մի այլ հոդվածը. «*Ուրբառեր ուսմինական հանրագիտարանի համար*»<sup>5</sup> խորագրով և ուր որպագծեց Գարբիել արքեա. Այլազովով, Հովսեփ արքեա Սրբությանի, ուսմինահայ թեմի առաջնորդ Հովսեփ արքեա. Չորրապահնի, Մալքար Ակաթողիկոսի, Մանուկ թեհի, Ներսես Աշտարակեցու և Գրիգոր արքեա. Զաքարյանի ամփոփ կենապրությունները և Նախիջևանի Բեսարարիայի թեմի մասին: Դրանք մեծ մասամբ լույս տեսան նաև նույն 1940 թ. բովարեստում հրատարակված Լուչիան Պրետեսկոյի «*Encyclopédia Cugelarea*» հանրագիտարանում և ուր բացի վերոհիշյալներից հրատարակվեցին դարձալ բեկվիլունի գրած Բեսարարիայի հայոց թեմի հոգևոր առաջնորդներ՝ Ներսես Խուդավերտյանի, Գրիգոր Աղարիոնի, Գրիգոր Շահինյանի և այլոց կենապրությունները:

Գեորգի Բեկվիլունին 1941 թ. ուսմինահայ բազմավաստակ բանասեր Հ. Շ. Սիրունու խմբագրած և հրատարակած «*Առի*» տարեգրում լույս ընծայեց հայերին վերաբերող մի այլ հոդված՝ «*Հայկական գերեզմաններ* Պրուտի և Դեստրի միջև» խորագրով: «*Հեղինակը* իր առաջարանում գրում է այն մասին, որ իր երկարատև ճանապարհորդությունների ընթացքում միշտ հետաքրքրվել է հայերի անցյալի վկաները հանդիսացող հուշարձաններով, հետազոտելով հայոց եկեղեցներն ու գերեզմանները: Այստեղ խոսում է Խոստինի հայոց հինավորոց տաճարի ավերակների, ինչպես նաև Բըլիշ և Աքքերմանի հայոց եկեղեցների և գերեզմանների մասին: Վերջին գերեզմանատնից հշում է հատկապես Ասլատուրով գերդաստանի գերեզմանների մասին և համարում է դրանք արվեստի գործեր: Քիշինևի մասին խոսելիս կանգ է առնում նայ կաթողիկների և նայ լուսավորչականների գերեզմանների վրա: Նշում է Ավիրակ Թովման Հոհանյան Ազուլեցի վարդապետի գերեզմանակությունի (մահացած 1827 թ.) և այլ բարձրաստիճան նայ հոգեվորականների դամբարանների մասին: Վերջում խոսում է նաև եկեղեցու մտք գրտնություն Մանուկ թեհի գերեզմանի և նրա կառուցած Հնչեցտ ավանի եկեղեցու մասին:

<sup>5</sup> Gheorghe Bezviconi, 8 cuvinte pentru Dictionarul Enciclopedic Roman, «Ararat», București, 1940, No. 187.

<sup>6</sup> Gheorghe Bezviconi, Morminte armenesti dintrre Prut și Nistru, «Anii anuarul culturii armene», București 1941, p. 389–393.

«*Առի*» տարեգրի 1942—1943 թթ. միացյալ հատորում Բեկվիլունին հրատարակեց «Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյան»<sup>7</sup> խորագրով հոդվածը: Այն առաջին խնամված ուսումնասիրությունն էր նվիրված ականավոր հայ հոգևորականի կյանքին և գործունեությանը: Նա ծագում էր Մոլդովայի հինավորուց հայ գալոթօջախի Աքքերմանից (այժմ Ռումանիական ՍՍՀ) և իրեւ Սրբության արքի հավատարիմ անձ հետագայում մասնակից եղավ Դավիթ-Դանիելլան կաթողիկոսական պատքարին: Նախապես գլուխուրում է Մոլդովալաքիայի թեմը և ապա 1812 թ. դառնում նորատեղ Բեսարարիայի թեմի հայոց առաջնորդը: Հեղինակը իր ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ անգամ այդ շրջանին, դեռևս, նա շարունակել էր ղեկավարել Մոլդովալաքիայի հայոց թեմական գործերը: Մուսինական ականամայում պահևած Գրիգոր Պալքոլիոնի դիվանում կան նամակներ գրված Գրիգոր արքեպիսկոպոսի կողմից, որ նա խոսում է իր ունեցած կապերի մասին ոչ միայն հայերի, այլև ուսմինացի և ուս անձնավորությունների մեջ: Մուս նշանավոր գրող Պուշկինը իր օրագրության մեջ նշել է հայ արքեպիսկոպոսի կազմակերպած ընդունելությունների մասին: Ցույց է տրվում, որ Գրիգորի և Մանուկ թեհի գործունեության ժամանակաշրջանում մեծանում է նաև հայերի հեղինակությունը Բեսարարիայում: Վերջում խոսում է Զաքարյանի կալվածների, նրա մահվան և իր հետնորդների մասին:

Նույն տարեգրի վերոհիշյալ հատորում դարձյալ լույս տեսավ իր մի մահախոսականը նվիրված Մոլդովայի Կըմպուլոնգ քաղաքի հասարակության նոտար Տիգրան Պրունկովի (1871—1942 թթ.) հիշատակին<sup>8</sup>: Խոսելով նրա կյանքի և գործունեության վրա, հեղինակը կանգ է առնում Պրունկովի արտասահման կատարած երկար ճանապարհորդությունների, գրադարաններ և բանկեր հիմնադրելու նպատակով նրա գործադրած ջանքերի, ինչպես նաև իր միջոցներով արտասահման ուղարկված ուսանողների և վերջապես իր ամբողջ կյանքը իրեւ հասարակական նոտար գրկանների կառուցներին ի սպաս դնելու մասին: Նա հմտության արքականացի էր և դեռ 1924 թ. հիմնադրել էր «*Justitia*» հանդեսը, որը և պաշտոնաթերթն էր Մուսինակայի նոտարներին, և

<sup>7</sup> Gheorghe Bezviconi, Arhiepiscopul Grigor Zaharia, «Anii anuar de cultură armeană» 1942—1943, București, 1943, p. 481—488.

<sup>8</sup> Gheorghe Bezviconi, Tigran Pruncu, Նույն տեղում թ. 673—624

աշխատում էր երկրում ստեղծել Ռումինիայի հասարակական նույարենորի ընթանուր միություն: Պրունկովի շաճքերը դրվագաբերի էին արժանացել նաև Ռումինիայում: Ինչպես նշեցինք, Տիգրան Պրունկովը իրեն Մանուկ բերի եղբոր Միրզա բերի շառավիլու ուներ ուշագրավ մի դիվան, որը ուսումնասիրեց Բեզվիկոնին: Պրունկովը ոգի ի բոհն աշխատեց փրկել Հնչեցում գտնվող Մանուկ բերի պալատը:

Բեզվիկոնին հայերին անդրադարձավ նաև 1962 թ. Բուլմարեաստում իր հրատարակած «Ռումինասիրություն» ուսումնա-ուսուական հարաբերությունների պատմության<sup>9</sup> խորագորվ արժեքավոր մենագրության մեջ: Նկատի ունենալով, որ այդ գործի արժանիքների մասին առանձին գրախոսությամբ սրանից առաջ անդրադարձել ենք<sup>10</sup>, ուստի այսուղե համառոտակի կյանքներ միայն հեղինակի կողմից հայերին նվիրած բաժնի վերաբերյալ: Նախ և առաջ հեղինակը կանգ է առել հայերի հնագոյն անցյալի պատմության վրա և ասա նշել հայերի գաղթելու պատճառների մասին: Նա ևս մյուս ուսումնացի հշանավոր հեղինակների հետ այն կարծիքին էր, որ հայերը Մոլդովայում հաստատվել էին դեռևս մոլդովական պետության ձևակորությունից էլ առաջ: Բեզվիկոնին ապա անդրադառնում է հայերի գլխավոր գալոֆօշանների, նրանց կառուցած հնագոյն հուշարձանների և երկրի կանոնում հայազգի հշանավոր անձնավորություններից մի քանի խաղացած դերի մասին: Վերջում հեղինակը խոսում է նաև ուսումնական մի շարք հուշարձանների վրա (Դեալի վաճքը, Կորտեա դե Արմեշի իշխանական նկալեցին, և այլն) հշմարվող հայկական և վրացական արվեստի թոռած ազդեցությունների մասին: Նրա կարծիքով կովկասյան և հայկական ազդեցություններ հշմարվում են նաև գերեզմանաքարերի, դոների և պատոհանների վրա կատարված զարդարաներակների, ինչպես նաև ձեռագրերի մանրանկարների վրա: Ըստ նրան անգամ արևմտյան մի քանի զարդարին էլեմենտներ ունեցող հուշարձանները արդյունք են նայ արվեստագետների աշխատանքի: Բեզվիկոնին խոսելով 1806—1812 ուս-թուրքական պատերազմի մասին առաջին անգամ լինելով ուսու-ուսումնական կապերի պատմության նվիրված մի մենագրության մեջ, հանգամանալից կերպով կըրկին կանգ է առել հայազգի մեծ դիվանագետ:

<sup>9</sup> Gheorghe Bezviconi, Contribuții la Istoria Relațiilor Româno-Ruse, București, 1962.

<sup>10</sup> Սուրեն Կոլանճյան, Ценное исследование «Литературная Армения», Ереван, 1964г., №5, стр. 194—106.

և ուսամական կողմնորոշման շատագով Մանուկ բեր Միրզայանի գործունեության վրա: Վերջում հեղինակը անդրադարձել է նաև Մոլդովայի մշակույթի մեծ լուսավորիչ, ծագումով հայ Գերոգե Ասաքիի տպարանում հայկական բաժին հիմնվերու և վերջինիս հանդեսում հայ գրականության և Հայաստանի մասին հրատարակած հոդվածների մասին, և այլն:

Բեզվիկոնին մեզ հայտնի ամենավերջին հայագիտական հոդվածը ճյուղագրական բնույթի անտիպ մի գործ է ևսիրված Մոլդովայի հայազգի Միհիր հնագոյն գերդաստանի պատմության<sup>11</sup>: Աշխատությունը գրվել էր 1957 թ. ուսումնական ակադեմիայի համարարությամբ. իրը պատասխան Զմյունիայից և Միհիր անուն մի հայի հարցադրման, որը խնդրել էր իրեն ուղարկել Ուսումնիայի Միհիրների մասին հյութեր: Համացցալ գիտնականը մեզ է տրամադրել սույն հոդվածի մեքենագիր օրինակներից մեկը, որից էլ քաղում ենք հետևյալ տվյալները: 1870 թ. Յոն Միհիրի կողմից կազմված ճյուղագրության մեջ, իրըն գերդաստանի նահապետ 1895 թ. հիշատակվում է Գրիգոր Միհիրը: Իսկ ըստ Լեհաստանի թագավոր Վլատիհավի դիպլոմի՝ կվովի առևտրականների մեջ հիշվում է 1427 թ. մի այլ S. Միհիր: Հեղինակը հիմնականում անդրադառնում է Ուսումնիայում ապրած Միհիր գերդաստանի հինգ ճյուղերի մասին և խոսում ա) Ուսման քաղաքի ճյուղի մասին, բ) Ուսման մի այլ ճյուղի, գ) Բուտշանի ճյուղի, դ) Բուտշանի մի այլ ճյուղի մասին և ի վերջու ե) Ֆոկշանի ճյուղի վերաբերյալ: Նա խոսում է այս գերդաստանի կողմից երկրին ընծայված հշանավոր անձնավորությունների մասին և ապա կանգ առնում ժամանակակից Միհիրների վրա: Հիշենք այդ կանանակը Միհիրներից մի քանի հային. 1791 թ. Ավատրիական և ուսուական բանակներին (թուրքերի դեմ մղված մարտերի ընթացքում). Ուսմանց Կամիլ Միհիրը իր եղբոր հետ օգնություն են ցոյց տալիս նրանց սննդամթերքով և հյուրընկալյում իրենց տունը: Մոլդովայի և Վալաքիայի միավորման նախօրյակին (1857—1859 թթ.) Միհիր գերդաստանի բազմաթիվ ներկայացնեցներ գտնվում էին միավորման առաջավածքում կողմնակիցների թվում: Կամիլ Միհիրը (1843—1929 թթ.) եղել է հայտնի իրավաբան, իրապարակագիր, ծերականության կալվածների նախարար: Պետրե Միհիրը (1856—1929 թթ.) Յաշի և Բուտշանի համալսարանների միջազգային իրա-

<sup>11</sup> Gheorghe Bezviconi, Familia Missir (անդամություն).

վունքի ուսուցապետ, ծեռակուլտի փոխ նախագահ, մտերիմ ընկեր նշանավոր թատրոնի Յ. Լ. Կարաջանի հետ, հրապարակադիր ու իրավունքի և գրականության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ: Նա նաև Ռումինական ակադեմիայի պատվավոր անդամ էր և համաշխարհային ժողովների մասնակից: Վալերիան Միհիրը թղթակցել է Մետերնիի հետ: Միհիրներից հայտնի էր նաև փաստաբան Յոն Միհիրը, որ քաղաքացի դարձավ Բոտոշանի և Բեղինակաց Առաջին համաշխարհային պատերազմի տպավորությունների իր մատյանը՝ «Մեռած ալջիկը», որի ներածությունը գրեց Ն. Յորգան, գիրքը ունեցավ մի քանի հրատակություն: Բեգվիկոնիի այս անտիպ սելմ աշխատությունը գրված է Բեղինակին հատուկ մեծ բարեխնդությամբ և փաստերի հիման վրա և ցարդ մեզ հայտնի լավագույն ճյուղագրությունն է գրված անվանի ուսումնական մասին:

Աջուշտ միայն վերոհիշյալ գործերով չեն սահմանափակվում Բեգվիկոնիի հայագիտական աշխատությունները, սակայն հիմնականու նկատի ունեցանք ամբողջությամբ հայ պատմությանը նվիրված նրա գործերը: Ասենք նաև, որ գիտնականի հինչեն տպագիր այլ բնույթի մենագրություններում և հորվածներում, այնպես էլ անտիպ գործերում ապագա հետազոտողը դեռ շատ հյութ կարող է գտնել մեր պատմության վերաբերյալ: Հինչեն հայտնել էր մեզ Բեգվիկոնին, իր անտիպ մատենագիտությունների մեջ նա առատ հյութ էր կուտակել նաև հայերի մասին:

\*

\* \*

Գերոգե Բեգվիկոնիի հայագիտական գործություններ պարզից ներ արժանացավ հայ ականավոր մշակերի ուշադրությանը և նրանց անվերապահ գնահատանքին: Դեռևս 1934 թ. վերջերին էր, երբ Քիշինում Բեգվիկոնիի հետ հանդիպեց մայր Հայրենիքից ժամանած հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը, Սմենայն Հայոց կաթողիկոսության լիազոր պատվիրակ Տ. Գարեգին արքեպահ. Հովսեփյանը (ապա կաթողիկոս Մեծի Տան Կիլիկիո), որ անսահման խանդակառությամբ ընդունեց հայագետի այդ ժամանակ դեռ լույս ընծանած հայագիտական անդրանիկ գործը՝ «Հայերը Բեսարաբիայում» գրքովը: Մեծանուն գիտնական նովոնրականը իր հիշատակ Բեգվիկոնին նվիրելով իր լուսանկարը, այդ առթիվ գրեց նաև հետևյալ տողերը. «Ես Ձեզ եմ դի-

մում ոչ իրոն մի հայի, այլ իրոն գիտության մի մարդու, մեծապես գնահատելով Զեր գործը: Մաղթում եմ, որ Զեր գրիշը ի սպաս դրվի մարդկության և գիտության օգտին: Այդ նոյնքան օգտակար է իննելու ինչպես հայերին, այնպես էլ ընդհանրապես մարդկության համար: Ես ևս պատմարան եմ և գիտեմ թե ինչպիսի ազնիվ ասպարեզ էր Դուռ ընտրել: Զեր աշխատության օրինակ-ներից մենք են հանձնելու եմ Էջմիածնի Մատենադարանին, որպեսզի հայտնի դատաս, որ Հայաստանից և հայերից հեռու գրտնվում են գրչի մշակելու, որոնք օտար լինելով հանդերձ մեր ժողովուրդից իրենց տաղանդը նվիրաբերում են հայ ժողովորդի պատմության ուսումնասիրությանը»:

Ռումինահայ թեմի հոգկոր առաջնորդ Հուսիկ արքեպահ. Չոհրապյանը և Բեգվիկոնիի հայագիտական առաջին գործի վերաբերյալ հատուկ շնորհակալագիր էր գրել 1934 թ. փետրվարի 12-ին:

Հայ բազմադյուն մշակ Արշակ Շոպանիանը իր գործունակությունը հայտնելով Բեգվիկոնիին նրա «Մանուկ բեյ» աշխատության վերաբերյալ, ձեռնարկել էր այս Փարիզում ֆրանսերեն հրատարակելու աշխատանքին, սակայն 1939 թ. պայտելով երկրորդ համաշխարհային պատերազմը նրա ցանկությունը ի կատար չածվեց, և «Մանուկ բեյ»-ի ֆրանսերեն թարգմանությունը մնաց Շոպանիանի դիվանում:

Ռումինահայ մշակներ Վարդան Մեշշունյանն ու Հ. Ծ. Սիրունին իրենց հրատարակած հանդեսներում ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրին հայագիտության բնագավառում Բեգվիկոնիի կատարած միակամայն գնահատակի գործերի հետ և մեծ սիրով հյուրընկալեցին նրա աշխատակցությունը:

Այս տողերը ստորագրողը թեև դեռ պատաճեկության տարիներից էր հաղորդակից դարձել Բեգվիկոնիի հատկապես հայագիտական աշխատություններին, սակայն միայն նրա բեղմնավոր կյանքի վերջին տարիներին էր, որ նամակագրության միջոցով բախտը ունեցավ հանձելու գիտնականին ու մարդուն և հայաերին: Նա ոչ միայն բազմական և հանչչում գտած գիտնական էր, այլև համեստ ու միանգամայն ազնիվ մի անձնավորություն, և որը երբեք չէր զլանում իր հյուրիորդները տալ և խրախուսել նոր ասպարեզ մտնող երիտասարդներին, այդ թվում նաև մեզ: Նրա վերջին տարիների բունք ցանկությունն էր կրկին անդրադառնալ իր երիտասարդական տարիքում կատարած հայագիտական գործերին և իր հայաբան նորանոր ճոխ նյութերի օգնությամբ հարատացնել և դարձյալ հրատարակել

դրանք: Սակայն նա միևնույն ժամանակ մտածում էր գրադարձել նաև հապահիտական նոր հարցերում: Նա իր համակենթից մեկում գրում էր այդ մասին. «Զքաղլում եւ Մոլորվայի միջնադարյան պատմությամբ: Ինձ հետաքրքրում է ամեն ինչ, որ հրատարակվել է Մանուկ թեյի, Գր. արքեպ. Զքարյանին, Բետապարհայի ու Նոր Նախարարականի թեմի և նրա մյուս հոգեւոր առաջնորդների վերաբերյալ, ինչպես նաև հայկական պատասխորության սկզբանական շրջանի պատմությամբ, եթե Հայաստանը և իր հարևանները իշխանական տեսք ունեն, Ռուսիանից հայերով և այլն: Աշխատում եմ, ինչքան որ հնարավորություն է ինձ տալիս իմ սոլոշական վիճակը»: Նա դարձավ անդրադառնալով իր հախորդ մեծ գործին գրում էր. «Ի՞նչորէ այսօր Մոլորվական ՍՍՀ-ի հայերի պատմությունը շատ ավելի լավ և առողջական կարող էի գրել», սակայն հեղինակին ուրախացնում էր այն հանգամանքը, որ երիտասարդությանը իր գրած այդ գործում օգտագործել էր այնպիսի հյութեր, որոնք այժմ անհետացել են գիտության համար: Մի այլ ակագամ մեծ ուրախությամբ էր ավետում այն լորր, որ մեկի մոտ գտել էր 19-րդ դարի սկզբից մի շարք վավերաթղթեր Գր. արքեպ. Զքարյանի վերաբերյալ և ցանկություն էր հայտնում հետագայում այդ մասին մի հոդված գրել:

Ի տես արյան և մոխրի միջից հառնած Հայաստանին, Բեզզիկոնին մեծ ոգեսրությամբ հետևում էր մեր հայրենիքի առողջական և հայագիտության ձեռք բերած նորանոր հվանումներին: Հայագետ պրոֆ. դոկտ. Վլադ Քընըցեանուն իբրև Հայաստանի գիտ. ակադեմիայի «Պատմաբանականի համար իսրաքարական մարմնի անդամ, անշուշտ խմբագրության հրավերով, առաջարկել էր Բեզզիկոնին իր աշխատակցությունը բերել Հայաստանի կարևոր համեմեն: Նոյնպես Բեզզիկոնին գրախոսություններ գրեց Հայաստանի գորդների ոուսերնեն պաշտոնաթերթ «Լիտերատուրայի Արմենիա» հանդեսի մի շարք համարների մասին և որը պետք է հրատարակի Ռուսիանից արեւելագետների «Studia et acta orientalia» հանդեսի մեջ: Նա վերջուն հնարավորություն ունեցավ համակագումական կազ հաստատելու անվանի հայագետ Լևոն Մելիք-Անդրեյի մետ, որի աշխատություններին նա վաղուց ծանոթ էր: Բեզզիկոնին շարունակ հետաքրքրվում էր Հայաստանի ալարեմայի և Մաշտոցան Մատենադարական հայագիտական հրատարակություններին: մեծ ուշադրությամբ կարդում էր հայ ժողովրդի պատմություններ ու այլ հայագիտական գործեր: Նա մեծ հիացմունքով էր խոսում հայ

արվեստի և հայ պատմության մասին և որոնց հայրիված հասուն արքուն էր կազմում. «Ենչ հրաշալի արվեստ և պատմություն ունի ձեր ժողովուրով, միշտ էլ եւ սիրել եմ հրան: Նրա մեծագոյն ցանկությունն էր, թեկուց կարճ ժամանակով, իր տիկնոց մեռ գալ և տեսնել Հայաստանի ու նրա սիրուց՝ մեր քաղաքամայր Երևանը. իր վերջին համակենթում Բեզզիկոնին գրում էր. «Կարող է մի օր ատիթը պիտի ունենաւը այցելելով Երևանը, որը այնքան սիրում եմ իր ու Հայաստանի սիրուր», և կամ «Անձ հանուցով կը կառարեկ այդ հանապարհորդությունը, որպեսզի 10—14 օր մնամ այն ժողովոյի մեջ, որին սիրում և արժեքավորում եմ դեռ երիտասարդ հասակից»: Սակայն ափսոս, որ չիրականացավ նրա այդ փայտայած երազը:

Նա իր տպագիր ամենավերջին սովոր աշխատությունից օրինակենք իրու նվեր ուղարկել էր Ամենայն Հայոց Վեհափառ կառողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ին, (որին անձամբ ծանոթ էր դեռևս Ռուսիանից թեմի երբեմնի առաջնորդ Հովհաննի արքեպ. Զքարյանի ժամանակից), ինչպես նաև Հայաստանի գիտ. ակադեմիայի գրադարանին:

Բեզզիկոնին կարծեք հայսագգալով իր մոտական վախճանը շարունակում էր աշխատել մեծ եռանդով գիշեր ու ցործեկ: Նրա վաղածամ մահով ինչքան ու գործեր կիսաս մնացին և ինչքան գեղեցիկ ծրագրեր շիրագործվեցին: Նրա անշնչացած մարմինը այժմ հանգչում է Բուլարեանի հշանակոյ թեղուի գերեզմանոցում, որի մասին էլ նա այնքան գեղեցիկ էշեր է գրել, և շատ մտիկ է գրտնվում իր թանագին ուսուցչապետի և հընչակալոր գիտնականի՝ Նիկոլա Ցորգայի դամբարանին: Երկու տարբեր սերունդների ներկայացուցիչներ են թեմ այդ գիտնականները, ակադեմիկոս Արամ Անոնցները միշտ հվիրական են մնապու նաև մեր ժողովոյի համար, որպեսուն նրանք մեր անփոխարինելի բարեկամները մնացին մինչև իրենց վերջին շունչը:

Հանգույալ գիտնականի այրին՝ տիկ. Տատիան Բեզզիկոնին օրինակելի ու բացառիկ հայսանականությամբ և մեծ գործունեակով այսօր պահնակում է իր ամուսնու բովանդակ գիտական ժառանգությունը, և ավարտված գործերը պատրաստում է տպագրության հանձնելու համար:

Պատմաբան Գեորգե Բեզզիկոնիի վաղածամ մահը, ոչ միայն խոշոր կորուստ է Ռուսիանից և Մոլորվական ՍՍՀ-ի գիտության համար, այլև մեծ կորուստ է նաև հայ ժողովորդի և Ռուսիանի մարման աշխատանքների համար, որոնք

արդեն շատ ծանր հարված էին կրել հայագետ պրոֆ. Վլադ Բընքենանոի մահով:

Հայ-մոլորդության և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը Մոլորդության ՍՍՀ-ում և Ռուսիայում ուսումնասիրել փորձող ապագա պատմաբանը, առանց Գեորգե Բեզվիկոնիի հայագիտական ժառանգության չի կարող հաջողության հասնել, բանի որ նրա գործերը ուսանելի և արժեքավոր շատ բան են բովանդակում և բացի այդ, ինչպես նշեցինք, նրա օգտագործած հույսերի մի մասը այժմ գործություն իւսկ չունի և այդ մասին մեզ հաւտնի եղող միակ

աղբյուրը դարձայ հանդիսանում է ոռոմինացի հայագետի նույն ժառանգությունը:

Նվիրելով վերոնիշյալ տողերը ոռոմինացի գիտականի կյանքին, գալիս ենք մեր հոգու պարտքը և խորին հարգանքը մատուցելու նրա պայծառ հիշատակին: Հայ ժողովուրդը իր լավագույն երախտագիտությունը հայտնած կլինի անմոռանալի հայասեր և հայագետ Գեորգե Բեզվիկոնիի հիշատակին, եթե մի օր կարողանա, իր համար այնքան սիրելի եղող, մեր Մայր Հայոց Եղիշեություն հայերեն թարգմանությամբ լուս ընծալել նրա հայագիտական վաստակի մի հատորյակը:

